ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

Հայաստանի Հանրապետություն ,Լոռու մարզ, «Սպիտակի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ, Շահումյան 10
Հեռ: (0-255) 2-04-77 էլ. փոստ՝ nuhspitak2@gmail.com

«Շամս Գրուպ»ՍՊԸ-ի
տնօրեն Մ.Ալոյանին
(Արարատի մարզ, գյուղ Մարմարաշեն, 2փող. տուն 28
էլ. հասցե՝ sharm.grouparm@mail.com)

11.03.2022թ.

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, այսուհետ «Գնորդ» և «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի, այսուհետ «Վաճառող» միջև 15.02.2022թ. կնքված ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2 պայմանագրի 1.1 համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հեռախոսազանգերի, ծանուցագրերի միջոցով և բանավոր կերպով բազմիցս զգուշացրել է Վաճառողին՝ ապրանքները պահանջագիր ներկայացնելուց հետո սահմանված ժամկետներում մատակարարելու համար, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ապրանքները պատշաճ որակով և ժամկետներում մատակարարելու ուղղությամբ:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ «Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը»: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 2022 թվականի մարտի 11-ից միակողմանի լուծում է «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի հետ 15.02.2022թ. կնքված ՍՀՀՄ-ԳՀԱՊՁԲ-22/2 պայմանագիրը մնացորդային 2 208 617 ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր մարմին:

Հարգանքներով՝

«Սպիտակ համայնքի թիվ 2
մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

«06802556»
«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»